№ 143 ՕԳՈՍՏՈՍԻ 23 (ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4) 1878 ՕԳՈՍՏՈՍԻ 23 (ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4) № 143

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ Թիւրքիան չէ հասկացել — Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Օձունից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Ռումինիա։ Արտաքին լուրեր։ — «Մշակի» հեռագիրները։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Գեղարուեստ։

ՄԻԹԷ ԹԻՒՐՔԻԱՆ ՉԷ ՀԱՍԿԱՑԵԼ

—

Անգլիան յանձն է առել պաշտպանել Թիւրքիայի ասիական երկիրների ամբողջութիւնը և նորա հետ կապված գաղտնի դաշնադրութեան զօրութեամբ ընդունել է Թիւրքիային իր հովանաւորութեան տակ։

Թիւրքիան այսպիսով դարձել է Անգլիայի աւատական (վասալական) պետութիւն։

Առերևոյթ Թիւրքիայի համար այդ տեսակ հովանաւորութիւնը օգտաւէտ է մի կողմից որովհետև Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանելով Անգլիան միջոց կը տայ նորան վճարել իր պարտքերը իր պարտատէրերին, միւս կողմից որովհետև Բրիտանիայի լուսաւորված տէրութիւնը կը հոգայ Թիւրքաց երկիրներում լուսաւորութիւն տարածելու, երկիրը ծաղկեցնելու, ճանապարհներ և երկաթուղիներ շինելու, երկիրը մշակել տալու, հանքերը բանեցնելու և այլն։

Բայց միւս կողմից Անգլիայի ձեռքից այդ տեսակ բարերարութեան ընդունելը կարող է շատ թանգ նստել Թիւրքիային։ Թիւրքիան դառնալով Բրիտանիայի աւատական իշխանութիւն, էլ երբէք չի ազատվի նորա հովանաւորութենից։

Մի երկիր, որ իր հասարակական և քաղաքական վերածնութեան յոյսը դնում է ոչ թէ իր սեփական ներքին ոյժերի զարգացման վրա, բայց դրսի մի պետութեան հովանաւորութեան վրա,—դադարում է որպէս անկախ պետութիւն գոյութիւն ունենալուց, կորցնում է իր գոյութեան իրաւունքը։

Փոխանակ կեանքի կանչելու իր երկրի բոլոր դեռ կենդանի մնացած գործիչները, փոխանակ շունչ տալու պետութիւնը կազմող այլ և այլ ազգութիւններին, հասարակական և քաղաքական ինքնուրոյնութիւն զարթեցնելու երկրի բոլոր մասերի մէջ, ինքնավարութիւն տալու իր բոլոր նահանգներին,—Թիւրքիան առանց որ և է ընդդիմադրութեան յանձնվում է Անգլիայի ձեռքը....

Թիւրքիան շատ թշնամիներ է ունեցել. այդ թշնամիների թւում և մենք էինք։ Նա երբէք չիմացաւ օգուտ քաղել իր թշնամիներից տուած դառն դասերից և խորհուրդներից։ Նրան անդադար ասում էին՝ տուեցէք ազատութիւն, տուեցէք ինքնուրոյն կեանք ձեր քրիստոնեայ հպատակներին և դուք փրկված կը լինէք։ Թիւրքիան չը լսեց իր թշնամիների խորհրդները, բայց հետևեց իր բարեկամի, Անգլիայի խորհրդներին, յանձնեց իրան Անգլիայի ձեռքը և այժմ կորցնելու է կատարելապէս իր անկախութիւնը, կորցնելու է իր գոյութիւնը։

Բայց դեռ ուշ չէ։ Թիւրքիան դեռ կարող է խելքի գալ, եթէ ուզենայ պահպանել իր քաղաքական գոյութիւնը, նա կարող է ազատվելով Անգլիայի խեղդող գրկից կրկին շունչ քաշել, կրկին կենդանանալ։

Այդ նա կարող է անել միայն մի միջոցով՝ այն է լայն ինքնավարութիւն տալով իր նահանգներին, որոնց թւում և Հայաստանին։

Եւ այդ երկիրները անկախ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ
ՓԱՐԻԶԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒՄ

(Շարունակութիւն և վերջ)

Նկարների բազմութեամբ և լիակատարութեամբ պատուական տեղ է բռնում համաշխարհային հանդիսի մէջ նաև անգլիական գեղարուեստեան բաժինը։ Անգլիական բաժինը հաշվում է իր մէջ 283 նկարներ, 46 արձաններ, 191 ակուարել և գծագրութիւն, 171 ճարտարապետական և 42 զանազան նկարներ։

Ես վերևում յայտնեցի, թէ ազգային կեանքը կարելի է իմանալ գեղարուեստական դրութենից և որքան այդ ճիշդ է անգլիական գեղարուեստին վերաբերեալ... Անգլիական արուեստը այն չէ, ինչ որ մենք ֆրանսիացիների և աւստրո-ունգարացիների մօտ տեսանք։ Ֆրանսիացիների և աւստրո-ունգարների մօտ զարգացած է աւելի այսպէս անուանեալ՝ մեծ նկարչութիւնը և պատմական նկարչութիւնը։ Անգլիացիները ունեն այլ ձև, որը ոչ մի երկրում այնքան աջող կերպով չէ զարգացած, որքան Անգլիայում։ Այդ տեսակը՝ կենսանկարչութիւն է, այսպէս անուանեալ genre-է։ Genre կոչում են այն նկարին որի առարկան վերցրած է անմիջապէս ընտանեկան կամ հասարակական կեանքից։ Ամենայն ինչ, որ անցնում է ընտանեկան և հասարական կեանքում, որը կարող է լինել թէ ողբալի, թէ ծաղրալի, այդ բոլորը կարող է տալ նկարչին առիթ genre նկարչութեան համար։ Նոյն այդ պատճառով և թարգմանեցինք այդ խօսքը կենսանկարչութիւն բառով։

Որպէս հասարակական և մանաւանդ ընտանեկան կեանքը առհասարակ մարդկային մտերմութիւն է ներկայացնում, այդ պատճառով կենսանկարները միշտ սիրելի են իրանց մտերմութեան արտայայտող բնաւորութեամբ։ Եւ ումը չէ յայտնի, որքան զարգացած է Անգլիայում ընտանեկան կեանքը.—ուստի և մտերմութիւնը։

Բացի կենսանկարներից անգլիական բաժնում կան նաև պատմական նկարներ և նրանց թիւը բաւական մեծ է։ Իբրև պատմական նկարիչներ անուանի են՝ Օրխարդսօն, Գրանտ, Էլմօր և Մարկս, բայց նրանք իրանց գործի այն աստիճանի բարձրութեան վրա չեն, ինչպէս կենսանկարիչներ, որպէս Հիրկոմիր, Մելլես, Վալիս, Լէսլի։

Որպէս զի մի գաղափար տանք կեսանկարչութեան մասին, յիշենք այստեղ մի քանի նկարներ յիշեալ նկարիչներից։ Պարոն Հերկոմիր ունէ մի նկար՝ «վերջին ժողով» անունով, որի վրա այստեղ առաջնադոյն նկարի վրա են նայում։ Պարոն Վալիս ունէ մի պատկեր՝ «բանտի պատուհանը» անունով։ Դա մի գեղեցիկ և հետաքրքրելի պատկեր է. բանտի մէջ գերիները իրար սղմում են, որ որքան կարելի է, լաւ ունկնդիր լինեն մի խալացու ջութակի խաղին, որը կանգնած է պատուհանի տակ։

Մենք թողնում ենք մի առ մի յիշելը և յիշելով այստեղ Լէյթօն, Ֆիլդէնի միայն անունները, անցնենք Լանդսէէրի նկարներին։ Լանդսէէր մի հռչակաւոր նկարիչ էր, որը մեռաւ 1873 թ., բայց չը նայած դրա և չատերի մահին, Անգլիան ուղարկել է փարիզի հանդէսը նրանց աշխատանքները։ Դրանով Անգլիան ցոյց է տալիս, թէ որքան նա երախտագէտ է աշխատողների համար, չը նայած թէ նա մեռած է, թէ կենդանի է։ Ես այդ ասում եմ այն պատճառով, որ Ֆրանսիան այս անգամ այնքան երախտագէտ չը հանդիսացաւ։ Մեռած նկարիչների գործերին միայն հազիւները կարելի է գտնել ֆրանսիական բաժիններում։

Բայց շարունակենք։

Լանդսէէրի մի նկարն է «մարդը մտադրում է, Աստուած կարգադրում» նաև «կարապները արծիւների ձեռքում» և մի քանի այլերը։

Անգլիական բաժնում ուշադրութեան արժանի է մանաւանդ Ալմա-Տադիմա, որը կէսծ անուն է մի հոլլանդացու, որը բնակվում է Լօնդօնում։ Այդ նկարիչը լաւ ծանօթ է փարիզում իր նկարներով, որոնց նա ներկայացրել է վերջին տարիներումս փարիզի Սալօնում *) Նորա նկարներն են՝ «մի այցելութիւն Ագրիպպայի մօտ», «նկարների գալլերէյ» և այլն։

Իբրև պորտրետիստներ, յիշենք պ. պ. Կալդերօն, Կամերօն, Մելլես։ Ակուարելներ՝ Լինտօն Վարհէր և այլերը։

—

Գերմանիան, ինչպէս որ մեր ընթերցողներին յայտնի է, այս տարվայ համաշխարհային հանդիսին ներկայ չէ. բայց նա մի բանում զարտուղեց իր բռնած ճանապարհից. Ֆրանսիայի խնդիրքը գոնէ մասամբ բաւականացնելու համար, Գերմանիան բացաւ հանդիսի մէջ գերմանական գեղարուեստական բաժինը։ Բայց պէտք խոստովանած, որ այդ բաժինը իր թէ արտաքին չքեղութեամբ և թէ նկարների ընտրութեամբ արժանի է Գերմանիայի անունը իրան վրա կրելու։ Գերմանիային տուած է մի մեծ և փառաւոր դահլիճ, այն դահլիճը, որը Ֆրանսիան նշանակած էր իր վաղուայ թագաւորների թանկագին քարերը ներկայացնելու։ Բացի դորանից, դահլիճը լիքն է ամենայն տեսակ յարմարութիւններով հասարակութեան համար։ Այստեղ կան բաւականի աթոռներ և նստարաններ, թաւիշով պատած ամէն կողմում բարձր բոյսեր և ծաղիկներ ամառվայ շոգից ապաստան գտնելու համար։ Գերմանական բաժինը մտնելու համար պէտք անցնել մի հոյակապ և գեղեցկադէմ դռան միջով, որը շինած է կրկնածննդեան ճաշակով։ Մի խօսքով, Գերմանիայի դահլիճի նմանը չը կայ ամբողջ հանդիսի մէջ։

Ինչ կը վերաբերի նկարներին, պէտք ասած, որ գերմանական նկարչութիւնը այս տարվայ հանդիսում բաւականի գովուած է։ Նոյն իսկ ֆրանսիացիները չեն ծածկում։ Գերմանական նկարչութիւնը թէև չէ կարող մրցել ոչ ֆրանսիացիների և ոչ էլ աւստրո-ունգարների դէմ, ինչ կը վերաբերի մեծ և պատմական նկարչութեան։ Բայց նա նոցանից աւելի գերազանց է հենց իսկ այն բանում, ինչում հաչակված են նաև անգլիացիները, այն է՝ կենսանկարչութեան մէջ։ Բայց մի զանազանութիւն կայ այս երկու վերջինների մէջ. Մինչդեռ անգլիական կենսանկարը ներկայացնում է աւելի ուրախ, այո, շատ անգամ ծիծաղելի, զուարճալի անցքեր, գերմանական կենսանկարչութիւնը, ընդհակառակը ներկայացնում է աւելի խորամիտ, ծանր, տրագիկական բովէններ։ Այդ է նրանց զանազանութիւնը. մինը՝ զուարճական մտերմութիւն, միւսը տրագիկական մտերմութիւն է։ Գերմանական նկարչութիւնը աւելի սրտի համար է, քան աչքի և դա է, որ արժանի է մեծ գովասանքի։ Գերմանական նկարների մօտ դուք շատ չէք ծիծաղի, բայց գուցէ նկարածը ձեր սրտի մօտիկ առնէք. նրա մօտ դուք աւելի կը խորհէք։

Այս տարվայ գերմանական բաժնի ներկայացուցիչներն են՝ պ. պ. Կնաուս, Հօֆֆ, Դեֆրեգգեր, Կաուլբախ, Լէյբբ և այլերը։

Այդ բոլոր մեր յիշածներից պ. Կնաուսը ամենանշանաւորն է։ Գերմանիայում նա «վարպետների վարպետն է», բայց ինչպէս իր հայրենիքում, նոյնպէս էլ Ֆրանսիայում պ. Կնաուսը նոյն վարպետն է, այստեղ ևս նա ունի անընդդիմադրելի անուն։ Նրա պատկերները «մեռելոց», «գիւղացիները սեղանի շուրջը» հետաքրքիր նկարներ են. նմանապէս «երեխաների տօնը», և մի շատ լաւ աշխատասիրած նկար, որի անունն է «չորեր վաճառող և իր որդին», ուր երկու հրէաներ կանգնած մէկը միւսին հրահանգներ են տալիս՝ տասը կօպէկով առած հնացած չորը երեք րուբլով վաճառելու շնորհք ստանալու համար։

Պարոն Հօֆֆի մի նկար «երեխայի մկրտութը հօր մահից» յետ, իսկ Բօհելմանինը՝ «մի մասնաւորդական բանկի ելքը» (ի հարկէ կոտր ընկնելուց յետ!), ուր սրտաշարժ կերպով նկարագրված են ակցիօներների յուսահատ դէմքերը։

Այս օրինակներից ընթերցողը արդէն ինքը կարող է մակաբերել, թէ ինչ գոյն ունի առհասարակ գերմանական նկարչութիւնը, մանաւանդ կենսանկարչութիւնը։

Մեծ նկարչութիւն, ինչպէս այդ նկատում ենք

*) Սալօն կոչվում է նորանոր նկարների ամենայն տարի ներկայացրած հանդէսը, փարիզում Սալօնը գտանվում է 1855 թ. աշխարհահանդիսից մնացած Palais d'industrie կոչված մեծ շինութեան մէջ։

ինքնուրոյն կերպով զարգանալով, կեանք կը տան և ամբողջ պետութեանը։

Գ. Ա.

ՆՈՐԱԿՈՏ ՏԵՍԻԼԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

17 օգոստոսի

Այնքան գրելու բան կայ որ մարդ չը գիտէ ո՞րը գրէ և ո՞րը թողնէ։ Օրինակ ուզում էի գրել ձեզ և իբրև խմբագրի հարցնել թէ արդեօք մինչև ե՞րբ պէտք է մեր գործունեայ և բարեխիղճ հոգևորականները վանքերի պարսպներում, աքսորված փտեն, իսկ աղգային գործունէութեան ասպարէզը ծոյլ և փտած անձերի թողուլ։

Մինչև ե՞րբ պէտք է աղգային փափուկ խնդիրները կամայականութեան ապատան թողնել։ Մինչև երբ պէտք է առաջնորդներ դնել վիճակներում և ըստ հայկական եկեղեցական օրինաց կառավարելու իրաւունք չը տալ։ Մինչև երբ դպրոցական կանոններ հրատարակել, թեմական տեսուչներ նշանակել և Երևանի նահանգի պէս ընդարձակ նահանգում, բացի 6—7 տարրական դպրոցներից, բազմաթիւ հայ գիւղօրայքը առանց կրթութեան, տգիտութեան խաւարի մէջ թողուլ։ Մինչև երբ պէտք է լոկ անունով թեմական տեսուչներ պահել և ոչ թէ այդ ամենակարևոր և գիտութիւն ու եռանդ պահանջող պաշտօնը յանձնել արժանաւոր անձանց և փոխանակ պահանջելու որ ձրի և աղգասիրաբար միայն կատարեն այդ պաշտօնը, ինչպէս որ ներկայ—թեմական տեսչին են պահանջում, այլ ընդհակառակը ապահովել նրան օրինաւոր ռոճկով և պահանջել նոյնպէս օրինաւոր գործ. մի՞թէ ամեն ինչ մեզանում լոկ ձեի համար պէտք է լինի. ճեմարան չինել ձեի համար, տեսուչներ նշանակել ձեի համար, ամսագիր հրատարակել ձեի համար. թեմական տեսուչներ նշանակել, չեղած դպրոցների բազմաթիւ անուններ հրատարակել ձեի համար։ Կրթութիւն, լուսաւորութիւն, բարոյականութիւն, գործունէութիւն, յոյս, հաւատ, սէր, միութիւն, աղգասիրութիւն քարոզել լոկ ձեի համար. ձև, ձև, ձև. մինչև երբ պէտք է ամեն ինչ ձեի համար անել, ասացէք խնդրեմ։ Մինչև երբ մեր բարձրագոյն նպատակը, մեր իդեալը միայն փող ձեռք բերելը լինի։ Փող տուողն արդար է, չը տուողը՝ մեղաւոր, Ահա մեր բարոյական օրէնքը։ Ասացէք, խնդրեմ, ինչով բացատրենք այս բոլորը. կուզէի իմանալ թէ մինչև ե՞րբ պէտք է այս դրութեան մէջ մաշուինք....

Ուզում էի այսպիսի բաների վրա գրել ձեզ և ձեր կարծիքը հարցնելով իմանալ թէ ինչով պէտք է վերջանան այս տխուր հանգամանքները, ում կը վայելի արդեօք այս բոլորի մասին մարդասիրաբար հոգալ. բայց անիծվեն մեր Երևանի մոծակները, որ չեն թոյլ տալիս մարդուն իր ուզածը գրել, վերջացնել։ Ես էլ աւելորդ եմ համարում տեղոյս ուրիշ խնդիրների վրա խօսք բացանելն անգամ, որովհետև ինչոր կայ ամենքին յայտնի է, չեղած բաների համար զբաղածներն էլ հերքելու ժամանակ ու ցանկութիւն չը կայ։

Մի բան կուզէի նոյնպէս իմանալ. մեր պ. քաղաքագլուխը դեռ ևս իրաւասուների խորհրդարան չէ բացել, բայց «Մշակ» լրագրի յօդուածագիրը պ. Երևանցին աշխարհին յայտնեց որ պ. քաղաքագլուխը հայերից մասագործի ընկերութիւն կազմեց, հրապարակները ջրել է տալիս, փողոցների առուները մաքրել է տալիս, Զանգուից ուզում է առու բերել, գիշերային լապտերները լաւ է լուսաւորում, քաղաքի մէջ էժանութիւն է մտցրել և այն և այն։ Խեղճ յօդուածագիրը չէ հասկացել որ այսպիսի գործեր մեր պ. քաղաքագլուխը չէր կարող անել, եթէ մինչև անգամ սրտով էլ ցանկանար անել. և այս այն պատճառով որ տակաւին իրաւասուներ չը կան և խորհուրդ ու խորհրդարան չը կայ, ապա որ օրէնքով կարող էր անել նա այդ բաները։ Ցաւալին այս է որ մասգործութեան ընկերութիւնը ինչպէս որ անխորհուրդ ծնվել էր, անխորհուրդ էլ մեռաւ, կամ գոնէ վաղը չէ, միւս օրը հոգին կաւանդի նրան, ումից որ ստացել էր։ Չը մոռանանք որ բարեկարգութիւն կամ սրա նման մի բան որ լինում է, դեռ ևս պ. Ցիզանկովի նորընտիր պօլիցիմէյստերի կարգադրութեամբն է լինում։ Ես դեռ ևս քաղաքիս մէջ բարեկարգութիւն ասածդ չեմ նկատել տարաբաղդաբար, դեռ ևս մեր քաղաքացիք իրար կոտորում են։ Այս մի քանի չաբաթվայ մէջ դեռ ևս 6 մարդ սպանվել են սրով, մի քանիսն էլ սպանվելուց ազատվել։ Ամսիս 14-ին, Աստուածածնի տօնին, ուխտաւորներից մէկի սպանվելը աւելի ուշադրութեան արժանի է, իմ կարծիքով։ Ահա եղելութիւնը։ Պատերազմն սկսվելիս, երկու ջահիլ մարդ ընկերանում են և գօրքի ետևից գնում են առևտրի։ Դոքա ունենում են 130 ռուբլ դրամագլուխ. աշխատում են մինչև 1600 ռուբլ։ մէկը տիֆով հիւանդանում է, հետևաբար առևտուրը մնում է միւսի ձեռքում։ Հիւանդը գալիս է Երևան, առողջանում է և յետ գնալիս հանդիպում է իր ընկերին, որը ծախած վերջացրած է լինում բոլոր ապրանքը և փողերը գրպանում գալիս է լինում Երևան։ Միւսն էլ հետն է վերադառնում։ Հիւանդացողը հաշիւ է պահանջում. առողջ մնացողը նրան ոչ իբրև ընկեր է ընդունում և ոչ էլ իբրև ծառայ։ Մարդիկ մէջ ընկնելով 800 ռուբլը իջեցնում են 90 մանէթի. առողջը խոստանում է այդքանը տալ, բայց այդ ևս չէ տալիս։ Հիւանդացողը չունենալով թուղթ ու պայման, գանգատ չէ անում, բայց սիրտը հովացնելու համար ծեծում է։ Ծեծվողը գանգատում է. ծեծողին 4 ամիս բանտ են վճռում. վճռից յետոյ յայտնում է որ պէտք է սպանէ և իրաւքանի մի օրից յետոյ, օրը ցերեկով, ուխտաւորաց բազմութեան մէջ ատրճանակով սպանում է իր ղրկողին և յօժարակամ գալիս է պօլիցիա և յայտնում։ Ահա մեր բարեկարգութիւնը։

Հին-բարեկամ

ՆԱՄԱԿ ՕՁՆԻՑ

—

18 օգոստոսի

Ցուլիսի 14-ին Քարվանսարայի մօտից չատ մթնով անցնելուս պատճառով չը յաջողվեցաւ ինձ ծանօթանալ այդ գիւղի հետ. դրա համար առանց մի խօսք ասելու այդ գիւղի վերաբերութեամբ, հեռացայ այդտեղից գիշերվայ ժամի 12-ին և յիշեալ ամսի 19-ին մտայ Թիֆլիս, որտեղ 20 օրվայ մէջ բոլոր գործերս աջողութեամբ վերջացնելուց յետոյ, վերադարձայ կրկին Զալալ-Օղլի։

Քեափանակի մօտ մեր ֆուրգոնի անիւը կոտրվեց, այդ պատճառով սրա բեռը բաժանեցին միւս ֆուրգոնների վրա, իսկ մենք ճարահատած Քեափանակից մինչև կաթոլիկների գիւղը — Շիշթափայ, որ 35 վերստից աւելի կը լինի, ոտով գնացինք։ — Օգոստոսի 12-ին դուրս գալով Զալալ-Օղլուց, Լօռու գիւղերը մտնելով նոյն ամսի 16-ին հասանք Օձուն գիւղը (Ուզունլար)։ Մինչև այս գիւղը հասնելը պատահեցինք հազարաւոր խաչքարերի, սրբատաշ մատուռների, զարմանալի մահարձանների, հոյակապ աւերակ եկեղեցիների....որոնք ճանապարհների վրա, խոր ձորերի մէջ, ապառաժ լեռների գագաթին կիսակործան կանգնած և արեգակի առջև և ցաւալի դրութեան մէջ ողբում են իրանց փառաւոր անցեալը։ Այդ սուրբ աւերակները այնքան ճարտարութեամբ, նուրբ և գեղեցիկ քանդակագործված են, որ մարդ մնում է զարմացած։ Այնպիսի զարհուրելի ապառաժների գագաթների վրա սուրբ աւերակներ ես տեսնում, որ դատարկ մարդը մագլցելով այն օձապտոյտ ճանապարհով հազիւ է բարձրանում գագաթը։ — Որովհետև Զալալեանց Սարգիս եպիսկոպոսը չատ հիանալի նկարագրել է Լօռու բոլոր գիւղերը իրանց աւերակներով և դուրս է բերել նրանց բոլոր արձանագրութիւնները, այդ պատճառով ես չը կամենալով մի և նոյնը կրկնել, սահմանափակում եմ նամակս միայն Օձուն գիւղը նկարագրելով։

Օձուն գիւղը բաղկացած է 200 տներից, ունի չորս քահանայ, երեք դասատից բաղկացած մի անգործ դպրոց, հիանալի այգիներ, ծաղկաւէտ պարտէզներ, առողջարար օդ, մի զարմանալի «կենդանարար» անունով սառը աղբիւր, չորս կողմը անտառ, չրջապատած բարձրագագաթ լեռներով։ Ժողովուրդը ուսումնասէր է, բայց մի դրդող և հասկացող առաջնորդող չունի։ Թէև Վարդան եպիսկոպոսը, որ այժմ այս գիւղումն է մնում, հոգով աշխատում է ուսումնարանի բարեկարգութեան համար, բայց մի առաջաւոր իշխան ուրիշներին էլ համոզելով, խանգարում է սրբազան հոր բարի նպատակը և յուսահատեցնում է նրան։ — Ուսումնարանը, ինչպէս վկայում են բոլոր գիւղացիք, 1860 թ-ին չինել է Վարդան եպիսկոպոսը իր սեփական ծախսով մասնաւոր օգնութեամբ ժողովրդոց, բայց մի քանի տգէտ անձանց չնորհիւ ամեն բանով պատրաստի ուսումնարանը իր հիմնարկութեան օրից

ֆրանսիական և աւստրօ-ունգարական բաժիններում, սակաւ թիւով ենք գտնում գերմանական բաժնի մէջ։

Մեծ նկարչութեան համար այս տարվայ դեռ սկիզբներին աշխատեցին երկու մեծ անձեր՝ Օվերբեկը և յետոյ Կօրնելիուս, նրանցից մէկը հեռանել է հնութեանը, իսկ միւսը՝ կրկնածնդեան վարպետներին։ Բայց նրանց փորձերին չատ հետևողներ չեղան։ Մեծ նկարիչ Կաուլբախի մահից յետ, մեծ նկարչութիւնն էլ զրկվեց իր ներկայացուցիչներից։ Այդօրինակ նկարիչներից ներկայ են այս տարվայ հանդիսում պ. պ. Գիբհարտ և Պիլօտ, բայց դրանց մասին առհասարակ չատ չեն խօսում։

Անցնենք իտալական բաժին։ Դա էլ մի ուրիշ տեսարան է ներկայացնում, նա էլ ունի մի առանձին գոյն, և մարդու վրա արած ազդեցութիւնը ուրիշ է, այլապէս է։

Ոչ մի բան անուն չէ ստանում, չէ գովվում և ապագայ չունէ, ինչ որ ինքնուրոյն չէ, օրիգինալ չէ։ Այդ կարող էք ամեն բանին վերաբերել, նոյն ճշդութեամբ նրանց կարող էք վերաբերել և գեղարուեստին։ Իտալական նկարչութիւնը թէպէտ և իր արժանի բարձրութեան վրա չէ կանգնած, բայց նրան անտես առնել անկարելի է, որովհետև նա իր հնութեամբ զանազանվում է միւսներից, նա տարբեր է միւսներից Այդ արդէն բաւական է, որ հասարակութեան ուշադրութիւնը իր վրա դարձնի։ Եւ իսկ, ինչ կը լինէր, եթէ բոլոր ազգերը կուրօրէն հետևէին մի որ և իցէ ազգի ճաշակին, հայեացքներին և այլն։ Ինչի, քանի որ մի ազգ ապրում է մի այլ երկրում, այլ երկնքի տակ, այլ բնական հանգամանքների մէջ, ունենալով իր համար առանձին անցեալ ուրեմն և յուսալով ու ապաւինելով այդ ապագայի, այդ ազգը, ասում եմ, չը մոցնէ գիտութեան թէ արհեստի մէջ իր որոշ ինքնուրոյն զաղափարները, հայեացքները, ճաշակը։

Իտալիայի նկարչութիւնը ունի իր յատկանիշ գծերը։ Փնքոյշ և հալվող շաքարի նման, ահա իտալական նկարչութեան էական յատկանիշները։ Ծիծաղող և փայլուն—ահա նրա արտաքին յատկութիւնները։

Չամեմատել իտալական նկարչութեան այժմեան դրութիւնը 16-րորդ դարու մեծ վարպետների ստեղծվածների հետ—դա կը լիներ անկարելութիւն։ Այժմեան իտալական սերունդը կարծես հին իտալացիների յետագանները չը լինեն. նոյնը կարելի է ասել նկարչութեան մասին. սա արդէն հնուց սկսածի շարունակութիւն չէ, այլ դա նորածին մի ստեղծված է։ Այժմեան իտալացին չէ սիրում մեծ պատկերներ, ծանր և սերեազ նկարչութիւն, ոչ. նրա նկարները փոքրիկ են, բայց երևում է, որ նրա մէջ կեանք կայ. նա սիրում է այսպէս ասած «սիրունութիւն.» նա ուզում է, որ պատկերը լինի հաճելի, հոգեվառ, ուրախ։ Մի խօսքով, իտալացին փոխանակ ձեզ պատմական խորհրդածութիւններ անելու, նա մի քանի խօսքով ձեզ մի անեկդոտ կը պատմէ։

Պարոն Պազինի ունի լաւ նկարներ. նրա նկարները վերցրած են Փոքր-Ասիայից. ինչու՞ որովհետև Թիւրքիայում չատ ազգեր կան, չատ տեսակ հագուստներ, ուրեմն և չատ գոյներ կան. բայց գոյնը, գիտէք, որ փայլ է տալիս նկարին։

Պարոն Նեատիս նմանապէս կօլօրիստ է։ Բայց սա սիրում է աւելի քաղաքներ, հրապարակներ, ժողովներ նկարել։ Սրա նկարները են, օրինակ. «պիրամիդների հրապարակը», Փարիզի «Pont Royal», «մի ճեմելիք Լօնդօնի Ցայդ-պարկում» և այլն։

Այդ երկու նկարիչները՝ Պազինի և Նեատիս երկու ամենաճիշդ ներկայացուցիչները են իտալական վարպետութեան. առաջինը ունի աւելի նրբութիւն, երկրորդը՝ աւելի հոգի, աւելի կրակ։

Դրանցից յետ գալիս են արևելագէտներ, որպէս, Ֆերրարի և Մարչետտի. յետոյ՝ Եակօ Վաչչի, Սպիրիդօն, Բուվիէ, Միօն, Դելտի, Սինդեչի, Վերտունի, Մանցինի, Բոմպիանի, Բիանչի, և այլն։

Այդ բոլոր նկարիչները հաւասար չեն տաղանդի կողմից, բայց բոլորն էլ ուրախ են, փայլուն և երգող։

—

Եթէ մենք բոլոր ազգութիւնները մի առ մի յիշելու լինենք, մեր յօդուածը չափից դուրս կերկարացնէինք։ Եւ մեր նպատակը չէ անպատճառ լիակատար լինել։ Բաւական է, որ գոնէ մակերևոյթապէս ծանօթացրինք մեր ընթերցողներին Եւրօպայի գլխաւոր ազգերի նկարչութեան հետ։ Կարծեմ, որ այդ էլ բաւական է, թէ իմ կողմից, որը մասնաւորապէս չէ նուիրած այդ արհեստին, այլ մի սիրող է, որը կը ցանկանար բաժանել իր ընթերցողների հետ այն, ինչ որ կարողացել է դիտել և ուսումնասիրել մի կարճ միջոցում, եթէ մեր հայ հասարակութեան կողմից, որը դեռ չատ հեռու է հետաքրքրվել և կենսական պիտոյք չինել նկարչութեան նման մի անհրաժեշտ առարկայ։ Ուրեմն մենք թողնենք Սպանիա, Պորտուգալիա, Հիւսիսային Ամերիկա, Դանեմարք, Շվեցիա, Զվիցերիա, Նորվեգիա, Յունաստանը և այլն մի կողմը և մեր տողերը վերջացնենք մի կարճառօտ հայեացք ձգելով Ռուսաստանի գեղարուեստական բաժնի վրա։

Երկու նկարիչներ կան, որոնք իրանց նկարներով իսկոյն աչքի են զարնվում, այդ՝ նախ մեր հայկաղն Այվազովսկին է, իսկ միւսը պ. Սեմիրադսկի։ Մէկը՝ պէյզաժիստ, միւսը պատմական նկարիչ։

Մեր հայ հասարակութիւնը արդէն բաւականի չատ անգամ լսած կը լինի պ. Այվազովսկու անունը, որպէս զի մենք դեռ նոր ծանօթացնէինք նրա հետ։ Բայց հազիւ թէ չատերը արժանացած լինեն նրա նկարները տեսնելուն։ Այս տարվայ հանդիսի մէջ պ. Այվազովսկին ներկայացրել է չորս մեծ նկարներ, բոլորն էլ ծովային տեսարաններ։ Այն ազդեցութիւնը, որը թողնում են նրա նկարները մարդուս վրա, անկարագրելի է։ Բոլորն էլ լաւ ուսումնասիրած աշխատութիւններ են։

Միւս նկարիչը՝ պ. Սեմիրադսկին է, որ իր մեծ պատկերով, որը Ներոնի ժամանակ քրիստոնեաներին այրելու զարհուրելի տեսարան է ներկայացնում, բոլոր լրագիրների ուշադրութիւնը իր վրա է դարձրել։ Այդ պատկերը համաշխարհային հանդիսում եղած ամենամեծերից մէկն է։

Բայց պ. Սեմիրադսկուն չատ տեսակ յանդիմանութիւններ են անում, որոնց մի առ մի այստեղ յիշել աւելորդ ենք համարում։ Դրանից մէկը սա է. նրա մէջ ներկայացրած անձերի տեսք ու կերպարանքները համապատասխան չեն նկարի ընդհանուր գաղափարին, այսինքն երեսները տրագիկական չեն, այլ անփոյթ են։

Բացի դրանցից, ռուսական բաժնում մենք բաւականաչափ նկարներ ենք գտնում զանազան հեղինակների պատկանող։ Այդ նկարներից չատերը բաւականի հետաքրքիր են, մանաւանդ այն նկարները, որոնք վերցրած են անմիջապէս ռուսական կեանքից. օրինակ պ. Դմիտրիեվի պատկերը, որը ներկայացնում է «մի կայարան.» երկաթուղու գնացքը չուտով պէտք է տեղից շարժվի և ուտելիք ու ըմպելիք ծախողները՝ կանայք և երեխաներ, չտապում են ծախս անել, բայց չտապելու պատճառով մի քանիսը վայր են ընկած, մի քանիսը ծիծաղում են և այլն։ Բոլոր անձերը հագնված են, ի հարկէ, իսկ ռուսական ձևով։ Պ. Մակովսկու պատկերը, որը ներկայացնում է ինվալիդներին իրանց ամսական ռոճիկը ստանալու ժամանակ։ Մեասօեդով, որը ներկայացնում է մի երեխայի կարդալու ժամանակ և որի շուրջը նստոտել ու ականջ են դնում բազմաթիւ մուժիկներ։ Պ. Մուրավլիով, որը ներկայացնում է մի աղջիկ, որը չէ ուզում փեսայի հետ եկեղեցի գնալ պսակվելու համար, չը նայելով հոր սպառնալիքներին, իսկ մայրը նստած լալիս է։ Բացի դրանցից կան նաև ուրիշ հեղինակներ, որպէս՝ Կլօդտ, Օրլօվսկի, Վերեշչագին, Մարի Կրամսկոյ, Կօրզուխին, Պրեանեշնիկով, Կլեվեր, Ժուկովսկի, Պերով, Ցինտլեր, Գարլանով, Բօգօլիւբով, և այլերը։

Լինդհոլմ, պէյզաժիստ, Ֆինանդացի չատ գովվում է ու մեծ ապագայ է խոստանում։

Պարոն Անտոքոլսկի ունի մի քանի չատ պատուական արձաններ. ինչպէս «Քրիստոսը ժողովրդի առաջ». «Իվան Գրոզնի». «Սօկրատէս մահվան րօպէին։» Պ. Շիպով—«Մեծ Պետրոս» և այլն։

Մենք գրչի անցրինք համարեա միայն նկարչութիւնը. իսկ քանդակագործութիւնը, սկուլպտուրը, մի կողմ թողինք։ Բայց առածը ասում է՝ «Լաւ է քիչ, քան ոչինչ». ուրեմն բաւականանանք և այս քչով։

Փարիզ. օգոստ. 78. Ա. Ա.

մինչև 77 թ. բոլորովին դուռը փակ սարդերին է ծառայելիս եղել։ Թէև Վարդան եպիսկոպոսը մի քանի անգամ խնդրել է գրաւոր կերպով հոգևոր իշխանութենից ուսումնարանի մասին տընօրէնութիւն, բայց նա, չը գիտեմ ինչ հիման վրա, բոլորովին անտարբեր է մնացել և ուշք չէ դարձրել օր ըստ օրէ կործանվող ուսումնարանի վրա։—Այս ուսումնարանը շարունակ գործունէութեան մէջ կարող է լինել և անթիւ օգուտ կը մատակարարէ Լոռու բազմաթիւ մանուկներին, եթէ հոգևոր իշխանութիւնը ուշադրութիւն դարձնէ սրա վրա. որովհետև այս գիւղի եկեղեցին, ինչպէս վկայում են Լոռու բոլոր ծերունիքը և նոյն իսկ եկեղեցու կենդանի արձանագրութիւնները, ունի իր համար սեփական կալուած—Մարց անուանեալ հողերը որոնց կապալով է տալիս Թիֆլիսի կոնսիստորը և տարեկան 400—500 րուբլ առ նուազը արդիւնք է ստանում։ Տարեկան 100 րուբլ էլ «Սուրբ Նշան» անուանեալ ուխտատեղից է ստանում, որ գտանվում է մէկ վերստ հեռու այս գիւղից։ Ուրեմն 400 ր. եկեղեցու կալուածներից, 100 ր. այդ ուխտատեղից, մի 200 ր. էլ աշակերտներից թոչակադրամ կը գոյանայ, այդ քեզ 700 րուբլ։ Այսքան փողով երկու ուսուցիչ շատ հեշտութեամբ կը պահվի Օձուն գիւղի մէջ քանի որ գիւղացիք հաց, փայտ, և սենեակն էլ ուրախութեամբ կը տան։ Ես զարմանում եմ թէ կոնսիստորը ինչպէս է ստիպված, ինչ նեղութիւն ունի, որ հիման վրա, և որ օրէնքով այսպիսի մի ուսումնարան ունենալու արժանաւոր տեղից խլում է նրա սեփական արդիւնքը և առանց խղճահարվելու թողնում է ուսումնարանի դուռը փակ և զրկում է հազարաւոր մանուկներ կարևոր ուսումից։—Ես ամենևին չեմ հաւատում, թէ կոնսիստորը այդ փողերը աւելի ազգօգուտ գործերի վրա է գործ դնում, քան թէ այս ուսումնարանին նշանաւոր օգուտ կը բերէր։ Զարմանալի բան է որ մեր հոգևոր իշխանութիւնը իր բոլոր ոյժը միայն քաղաքների վրա է դարձնում, գիւղերին ամենևին նշանակութիւն չէ տալիս։ Երանի թէ հոգևոր իշխանութիւնը և Վրաստանի թեմական տեսուչը գոնէ այսուհետև մի լաւ հեռատեսութեամբ մտածէին այս հանգամանքների վրա։—Ժողովուրդը Վարդան եպիսկոպոսի թելադրութեամբ կարգադրում է գիւղի մէջ միան մի խանութ պահել և այդ մի խանութից տարեկան 250 ր. եկամուտը յօգուտ ուսումնարանի ստանան։ Կազմում են պայմանագրերը, ստորագրում են բոլոր գիւղացիք և կրպակի տէրը և ապա առաջարկում են Գ. Աբովեանցին, որ իբրև տանուտէր ակամայից վաւերացնում է երկու կողմի պայմանագրերը և կնքում է դատարանի կնքով, բայց մի քանի օրից յետոյ, ինչպէս պատմեցին գիւղացիք, Գ. Աբովեանը առնում է ժողովրդի ձեռքից վաւերացրած պայմանագիրը և պատռում է։ Գիւղացիքը հաստատում են, որ Գ. Աբովեանցի տանուտէրի պաշտօնի մէջ մտած օրից ամենևին գիւղերապահ չեն ունեցել և այդ պատճառով գիւղերային անկարգութիւնները օր ըստ օրէ չատացել են և չատանում են։ Այս գիւղի հասարակութիւնը կամենալով 18 տարի փակված ուսումնարանը բացանել, խնդրում են Վրաստանի թեմական տեսչին և բերել են տալիս 77 թ-ականին մի ուսուցիչ որ մինչև ներկայ տարոյս օգոստոսի վերջը հաղիւ հազ կառավարելով մեծ անբաւականութեամբ հեռանում է այդ գիւղից։ Պատճառը։ Պատճառը դարձեալ տանուտէրն է որ հազար մի միջոցներ գործ է դրել որ վարժապետի վարձը փոքրացնէ։ Վերջը երբ որ վարժապետը դանգատ է անում Զալալօղլու պրիստաւին, պրիստաւը կանչում է տանուտէրին և խստիւ պատուիրում է որ երեք օրվայ ժամանակով վարժապետի վարձը լրացնէ։

Ճանապարհորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 14-ին դէպի Կամիշեվկա գիւղը տանող ճանապարհի վրա կալանաւորեցին մի մարդ, որ իր ընկերների գործակցութեամբ յափշտակել էր մի քանի սայլ ապրանք Բօստով-Վլադիկավկասեան երկաթուղու կայարանի պահեստից։ Կալանաւորվածը յայտնել է, որ այդ ապրանքը ճանապարհի վրա է գտել։ Ապրանքի հետ գտնվեցան գողերին պատկանած զանազան տեսակ գործիքներ։»

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ մեզ հաղորդում են. «Օգոստոսի 15-ին անայայտ աւազակներ փորձում են կողոպտել ապրանքի վագոնները, բայց նրանց չէ աջողվում։ Օգոստոսի 15-ին մօտ 20 զինաւորված աւազակներ յափշտակում են 5 հակ ապրանք։ Քաղաքային դիշերապահ ձիաւորներին աջողվում է հասնել աւազակներին և խլել չորս հակը։ Ձիաւորներից մէկը վիրաւորված է։ Աւազակներից մէկին ձիաւորները սպանում են բայց սպանվածին իր ընկերները տանում են իրանց հետ։ Երևի Բօստովօ-Վլադիկավկասեան երկաթուղու վարչութիւնը այս անցքից յետոյ կը համոզվի, որ երկու կամ երեք անզէն ծառաներին չէ կարելի յանձնել ապրանքների և վագոնների վրա հսկողութիւն ունենալ։ Երկաթուղու կայարանը քաղաքի սահմանագծի վրա է։»

—

Ստացանք ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ տ. Աննա Թոմասեանից, տ. Աշխէն Մելիք-Ադամեանից և պ. Ռ. Մելիք-Ադամեանից 15 ր. յօգուտ «Արարատեան ընկերութեան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայում շուտով սկսվելու է ներքին կռիւ պարլամենտի զանազան կուսակցութիւնների մէջ լրացուցիչ ընտրութիւնների առիթով։ Լրագիրները հաղորդում են, որ մարշալ Մակ-Մահօն մտադիր է հրաժարվել հանրապետութեան նախագահութենից, իսկ Ալժիրիայի նահանգապետ գեներալ Շանզլին նրա յաջորդ են անուանում։

Ամբողջ Փարիզը այժմ զբաղված է կառապանների հարցով, որոնց ժողովը վերջապէս կայացաւ օգոստոսի 8-ին և որոնք ձևակերպեցին իրանց դանգատները «des petites voitures» ընկերութեան դէմ։

Միւս ընկերութիւնների և ձիաներ վարձով տուողների կառապաններն էլ, թէպէտ բոլորովին բաւական էին իրանց տէրերից, բայց նոյնպէս դադարեցրին աշխատանքը և մանակցեցին ժողովին, կամենալով պաշտպանել իրանց ընկերներին։ Ընկերների համերաշխութեան այսպիսի յատկութիւնը մանաւանդ պատիւ է անում կառապաններին, որ նրանք ընտանիքի տէր մարդիկ են և աշխատանքի դադարեցնելը նրանց համար բաւական զգալի է։

Օգոստոսի 8-ին, երեկոյեան Ֆէրնանդօ ցիրկի մէջ կառապանների ժողով էր նշանակած։ Նոքա տեղեկացել էին, որ գործատուների ընկերութիւնները մարդիկ էին վարձել ժողովի ժամանակ անկարգութիւններ գործելու, որոնց պատճառով պօլիցիան ստիպված կը լիներ փակել ժողովը, ուստի ամեն տեսակ նախազգուշութիւններ էին տեսել։ Լրագիրները հրաւիրեցին կառապաններին զգոյշ լինել, իսկ կառապանի տոմսակ չունեցող անձանց մուտքը արգելված էր։

Ցիրկի մէջ, գրում են լրագիրները, ահագին բազմութիւն էր հաւաքվել։ Կառապաններից շատերը չէին կարողացել ներս մտնել, տեղի պակասութեան պատճառով։ Դուրս պօլիցիականների մեծ բազմութիւն կարգ էր պահպանում։ Ցիրկի մէջ մամուլի ներկայացուցիչների համար առանձին տեղ էր պատրաստված և բոլոր կառապանները լրագիրների աշխատակիցների և թղթակիցների հետ յարգանքով էին վարվում։

Ժողովի նախագահ ընտրվեց կառապան Ժան Մօրից, որ մի եռանդոտ և կառապանների մէջ հեղինակութիւն ունեցող անձն է։ Նախագահը ընտրվելուց յետոյ իսկոյն բռնեց իր տեղը և առաջարկեց ժողովին շնորհակալութիւն յայտնել պօլիցիային ժողովի թոյլատուութիւնը տալու համար։ Ներկայ եղածները ծափահարութեամբ ընդունեցին այդ առաջարկութիւնը։

Դրանից յետոյ նախագահը առաջարկեց կառապանների պահանջների իւրաքանչիւր յօդուածը կարդալ առանձին և քուէարկել։ Հէնց որ սկսվեց ընթերցանութիւնը, գործատուների ուղարկած մարդիկը սկսեցին աղմուկ անել։ Նախագահը յիշեցրեց ժողովին, որ մի քանի չարանպատակ անձինք կաշխատեն անկարգութիւններ անել, որ նա այդպիսիներին իսկոյն կը հեռացնի։

Նախագահի այս յայտնութենից յետոյ նիստը շատ կանոնաւոր կերպով շարունակվեց։ Սինդիկատի բոլոր վճիռները միաձայն ընդունվեցան ժողովից։ Յետոյ ընտրվեցին 25 պատգամաւորներ, որոնց պարտականութիւնն էր պահանջել գործատուներից կատարել կառապանների պահանջները։ Պատգամաւորները հաւաքվեցին նախագահի շուրջը և կարճ խօսքերով բացատրեցին, որ նոքա հաստատ կը պաշտպանեն իրանց ընկերութեան շահերը։

Ժողովի վճիռներից առաջինը պահանջում է, որ ձիաները աւելի լաւ պահվեն, երկրորդ՝ որ կառապանների փոխադարձ օգնութեան դրամարկղը յանձնվի կառապանների ընկերութեանը, կամ իւրաքանչիւր կառապան իրաւունք ունենայ ընկերութեան անդամ լինել։ Մի և նոյն վճռի մէջ ասված է, որ կառապանը իր ծառայութիւնը մի ընկերութեան մօտ թողնելուց յետոյ, իրաւունք ունենայ վճարել իր տուրքը դրամարկղին և չը զրկվի այն իրաւունքներից, որ նրան տուել էին նախկին տուրքերը։

Երրորդ վճիռը ամենից գլխաւորն է։ Նրա մէջ ասված է, որ գործատուներից և կառապաններից բաղկացած մի խառն մանաժողով կազմվի, որի պարտականութիւնը պէտք է լինի որոշել իւրաքանչիւր կառապանի ընկերութեան դրամարկղին վճարելի տուրքի որքանութիւնը։ Մանաժողովը տուրքի որքանութիւնը որոշելու ժամանակ իւրաքանչիւր ամիսի նկատի պէտք է առնի անցած տարվայ նոյն ամսվայ եկամուտի որքանութիւնը։

ՌՈՒՄԻՆԻԱ

«Polit. Corresp.» լրագրին Բուխարեստից գրում են։

«Մեր արտաքին գործերի մինիստրութեանը արդէն յայտնեցին կօնգրէսի վճիռների մասին։ Ինչ կը վերաբերի Բեսարաբիայի ռուսներին յանձնելուն այդ գործը դեռ ևս չէ կատարված և Բեսարաբիան կառավարվում է Ռումինիայի իշխանութենից։ Դօբրուջայի գրաւելու մասին ռումինական կառավարութիւնը դեռ ևս ոչինչ չէ վճռել։ Մինչև որ կօնգրէսից Ռումինիային տուած երկիրները ռուսները չեն մաքրի և մինչև սահմանները չեն որոշվի այդ երկիրները Ռումինիան չի գրաւի։ Պէտք է ի նկատի ունենալ որ Դօբրուջան գրաւող ռուսաց զօրքերը Սան-Ստեֆանօից հրաման են ստացել պատրաստվել այդ երկիրը մաքրելու համար։ Հաւատացնում են, որ Դօբրուջայում բնակվող ռումինացիք չափազանց ուրախ են, որ միանում են Ռումինիայի հետ, իսկ մնացորդ ազգաբնակութեան մէջ թշնամական ցոյցեր դէպի Ռումինիան չէ նկատվում։ Կառավարութիւնը յարաբերութիւններ հաստատեց նոր նահանգի քաղաքների անուանի բնակիչների հետ և նրանցից ստացած պատասխանից շատ գոհ մնաց։

«Ռումինական զօրքերի մտադրված յաղթական մուտքը Բուխարեստ մի քանի պատճառներով չէ կայացել։ Այդ հանդէսը յետաձգվեց դլխաւորապէս այն պատճառով, որ ֆինանսների մինիստրը համաձայն չէր վճարել հարկաւոր եղած ծախսերը։ Հաւատացնում են, որ շուտով ռումինական զօրքերը կարձակվեն և այս տարի սովորական աշնանային զինախաղ չէ լինելու։

«Զօրքերին պաշարներ հասցնող ռուս ընկերութեան մանկանալը այստեղի առևտրական շրջանների մէջ մեծ տպաւորութիւն ունեցաւ։ Ընկերութեան անդամները լուր են տարածում, իբր թէ նոքա ռուսաց կառավարութենից 28 միլիոն րուբլ պահանջ ունեն, բայց դրան ոչ ոք չէ հաւատում, որովհետև դեռ մի քանի ամիս սրանից առաջ ռուսաց կառավարութիւնը քրէական գործ սկսեց այդ ընկերութեան դէմ։ Կալանաւորված են բազմաթիւ պաշտօնեաներ, որոնց թւում կայ և մի գեներալ։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ստոկհօլմից լրագիրներին հեռագրում են, որ օգոստոսի 12-ին հասաւ այնտեղ Օսկար II-դ թագաւորը և ընդունեց բանտային միջազգային կօնգրէսի պատգամաւորներին։ Նորին մեծութիւնը նոյն օրը ներկայ էր կօնգրէսի նիստին։ Երեկոյեան թագաւորական պալատում տօն կատարեցին ի պատիւ կօնգրէսի անդամների։ Օգոստոսի 14-ին կօնգրէսի վերջին նիստը կը լինի և մի և նոյն ժամանակ նա կը փակվի։

—Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին հեռագրում են, որ օգոստոսի 12-ին ռուսաց զբաղաւոր հիւպատոս իշխան Դոնդուկով-Կորսակով հասաւ Թիւրքաց մայրաքաղաքը։ Ռուսաց զբաղաւոր բանակը շուտով Սան-Ստեֆանօից պէտք է տեղափոխվի Բօգօստօ։

—Վիէննայից լրագիրներին հեռագրում են. «Զօրապետ Իվանովիչ տեղեկացնում է, որ օգոստոսի 21-ի կռիւ ժամանակ վերջնական հարուած է հասցրած Հերցեգովինայի ապստամբներին, որոնք քաջութեամբ պատերազմում էին և երկար ժամանակ պահպանում էին իրանց ամրացած դիրքերը։ Առաջնորդների մեծ մասը սպանված է, մնացած ապստամբները ցրված են, իսկ ապստամբների աւելի ուժեղ խումբերը պատսպարվեցան սարերում։

—«Հիրչի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է, որ ամենակատաղի կռիւը աւստրիական զօրքերի և ապստամբների մէջ Սերաեվօ վերառնելու ժամանակ կատարվեց նոր կամուրջի վրա, երկու մզկիթների մօտ։ Ապստամբներին առաջնորդում էր Հաջի-Լայա։ Մի քանի ժամանակ չէր կարելի որոշել, թէ յաղթութիւնը ում կողմը կանցնէր։ Վերջապէս հասան աւստրիական զօրքերի երեք թարմ գունդեր և նոքա վճռեցին կռիւ բաղդը։ Աւստրիացիները և ապստամբները շատ մարդիկ կորցրին։ Քաղաքը լիքն է վիրաւորվածներով։

—Սերաեվօից «Polit. Corresp.» լրագրին հեռագրում են, որ բոլոր պատութիւնների ներկայացուցիչները անվնաս են մնացել։ Նոքա այցելեցին գեներալ Ֆիլիպովիչին։

—Գիբրալտարից հեռագրում են, որ Մարոկօում երևեցած խօլերայի պատճառով կարանտին է հաստատված։

—Կ. Պօլսից մեզ հաղորդում են, որ ներկայ օգոստոս ամսի սկզբներում Խրիմեան սրբազանը վերադարձած է Կ. Պօլիս։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 37 կ., երկրորդ 95 ր., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 236 ր. 50 կ., երկրորդ 237 ր. 50 կ., արևելեան 92 ր. 62 կ., ոսկի 7 ր. 92 կ.։ Տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 62 կ., երկրորդ 95 ր. 25 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 236 ր. 50 կ., երկրորդ 237 ր. 25 կ., արևելեան 92 ր. 25 կ., ոսկի 7 ր. 93 կ.։ Տրամադրութիւնը ամուր է։

ԿՕԲՈՒՐԳ, 20 օգոստոսի (1 սեպտեմբերի)։ Էդինբուրգեան դքսուհին բարեյաջողութեամբ ազատվեց երկունքից մի աղջիկ ծնելով։

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Ինձ յանձնված լինելով ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ վարձել, խնդրում եմ ցանկացողներին պայմանների մասին խօսելու դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը. իսկ օտարաքաղաքցիք կարող են իրանց ցանկութիւնը յայտնել նամակով։ Անյարմար համարվածներին չի պատասխանվի։

Յ. Մէլիք-Յակոբեանց

Օգոստոսի կէսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատասիրութիւնները՝

1) Ընթերցարան հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ» անունով.

2) «ՀԱՄԱՌՕՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ»

Ցանկացողները ստանալ յիշեալ գրքերը իր ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» կամ Զաք. Գրիգորեանի գրավաճառանոցը։

3—3

Նոր տպագրութիւնը Նշանակութեան
Նուտով լոյս կը տեսնի «Թուաբանական խնդիրների ժողովածու», գրաւոր վարժութիւն տարրական ուսումնարանների համար. I մասն. աշխատասիրութիւն Զախարովի և Պաուլսոնի եղանակով. Բագրատայ Միրիմանեանց։

Կը ծախվի Զ. Գրիգորեանցի գրախանութում։

«ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»

Գուստավ Քալանթարեանցինը, ռուսերէն լեզուով, ծախվում է Բերենշտամի գրավաճառանոցում, Թիֆլիսում, Գօլօվինսկի պրոսպեկտի վրա։ Գինն է 75 կոպ. փոստի ծախսով 80 կոպէկ։

4—6

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

1. Նախակրթանք հայերէն գրաբար լեզուի, աշխատ. Գ. Արք. Այվազեան, չորրորդ տիպ. ճոխագոյն քան առաջինները։ Գինն է 40 կոպէկ։

2. Սկզբունք Քրիստոնէական հաւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ. համառօտ դասագիրք սրբազան պատմութեան և քրիստոնէական վարդապետութեան ծխական—տարրական ուսումնարանների համար, բազմաթիւ գեղեցիկ պատկերներով զարդարված, աշխատասիրութիւն Ստեփաննոս քահ. Տէր-Ստեփանեանի։ Գինն է 50 կ.

Վերոյիշեալ գրքերն ընդունված են իբրև դասագիրք Թիֆլիսի թեմի պ. թեմական վերատեսչից։ Վաճառվում են բացառապէս կենտրօնական գրավաճառանոցում։ Գումարով և կանխիկ դրամով գնողներին նշանաւոր զիջումն է լինում։

3. Մամուլի տակից դուրս եկաւ և այս օրերս կը սկսուի վաճառուիլ պ. Ղազարոս Աղայեանի «Ուսումն մայրենի լեզուի» անունով դասագրքի երրորդ տպագրութիւնը, տպագրված ամենապատուական թղթի վրա։ Գինն է 15 կ.

Նոր տպագրութիւնը վաճառվելու է միմիայն կենտրօնական գրավաճառանոցում։ Պատուէրններ ընդունվում են։

ՄՈԶԴՕԿԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ հարկաւոր են մի ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի և մի ՎԱՐԺՈՒՀԻ։ Նոյն տեղի ՔԱՂԱՔԱՅԻՆ երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ տարեկան 600 րուբլ ռոճիկով, շաբաթական 17 դաս։ Ցանկացողները կարող են մանրամասն պայմանները իմանալ «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՅՈՒՄ»

Գաբրիէլ քահանայ Տուրփայեան

4—4

«Тифл. Объяв.» լրագրի գրասենեակը տեղափոխված է Դվորցովյ փողոցի վրա, ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄԸ։

1—2

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ

ՀԵՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎԱԾ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Կովկասի ՄԱՆԿԱԲԱՐԶԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ յայտնում է հետևեալ։ ՄԱՆԿԱԲԱՐԶԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ մտնել ցանկացողները պէտք է խնդիրք ներկայացնեն բժշկական մասի կառավարչի անունով (Սամբինայա փողոց, իշխան Անդրօնիկովի տուն)։

Մանկաբարձական արհեստի բարձր կուրսեր մտնելու համար, որ իրաւունք է տալիս ստանալ մանկաբարձի վկայական և մտնել պետական ծառայութիւն իբրև քաղաքական և գաւառական մանկաբարձներ, որ տալիս է բժշկական կանօնադրութեան յօդ. 541 մէջ յիշված արտօնութիւնները, պահանջվում է գիտենալ. ռուսաց լեզուից ուղիղ կարդալ և գրել, պատմել գրաւոր և բերանացի կարդացածը, թուաբանութիւնից չորս գործողութիւնները (գումարումն, հանումն, բազմապատկումն, և բաժանումն), անուանական թուեր և համեմատական կոտորակներից։ Իսկ նրանցից, որոնք կը ցանկանան մտնել ստորին կուրսերը, որոնք աւարտելուց յետոյ կը ստանան գիւղական մանկաբարձների վկայականներ, պահանջվում է ռուսերէնից կարդալ և գրել և բերանացի պատմել կարդացածը։

Ինչպէս առաջինները նոյնպէս և վերջինները պէտք է 16 տարեկանից փոքր և 30 տարեկանից մեծ չը լինեն։

Խնդրքի հետ պէտք է լինեն մետրիկական և ծնողների կամ ամուսնի (եթէ մտնողը ամուսնացած է) թոյլտուութեան վկայականները։

Թոշակագրամը հետևեալն է. երթեւեկ աշակերտուհիներից տարեկան 40 րուբլ, իսկ գիշերօթիկներից, որոնց բոլոր հոգսերը ուսումնարանը կը տանի, 240 րուբլ և միանուագ 60 րուբլ սկզբնական ծախսերի համար։

Տարեկան թոշակագրամը մտնում է սկզբից և չէ վերադարձնվում, եթէ որ և է պատճառով աշակերտուհին ուսումնական տարվայ ընթացքում թողնէ ուսումնարանը։

Ուսման կուրսը երկու տարվայ է։

Մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐԶԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ։

3—6

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ օրիորդաց ուսումնարանում ուսումը սկսում է Սեպտեմբերի 2-ին, իսկ աշակերտուհի ընդունելը օգոստոսի 20-ին։ Անցեալ տարվանից բացուած են երեք պատրաստական և մէկ առաջին. այս տարի բացվում է երկրորդ դասատունը։ Պրօգրամի և աշակերտուհի ընդունելու մանրամասն պայմանների մասին կարելի է տեղեկութիւն ստանալ ուսումնարանի տեսչից։

1—3

Ամենակարճ միջոցում դուրս կը գայ տպագրութենից երեք, այն է՝ ռուսերէն, ֆրանսերէն և հայերէն լեզուներով մեր՝ «Կովկասի հիմնական լրագիրներ» անունով բրօշիւրը։ Դրա տպագրութեան համար բաց արինք յատկապէս Տէր-Յովհաննիսեան կանցլերիում, որ գտնվում է «Լօնդօն» հիւրանոցի կարգում, կամաւոր ստորագրութիւն։

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեանց

1—3

ՕԳՈՍՏՈՍԻ 23.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 22-ին)

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 22-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	—
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1540	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1278	—
Վիգրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրինի »	235	—
Մարսելի կուրսը 267 —	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	32
Վենայի կուրսը ամէ 112 գլ.	100	—
Գաւրեժի բարաթը.	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	101	—
Շաքարը բրօցկու	7	40
„ միւս տեսակը.	7	25
„ չաքարաւազը.	5	70
„ տրանզիտը.	6	—
„ մաքուր վճարած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից.	8	20
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը Թուշի	8	—
„ Թարաքամի	4	20
Ալիւր Շորագալու	1	80
„ Երևանի.	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքս Նուխվայ.	180	—
Կախեթունը.	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	42	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	50	—
Կոֆէն մօկօի.	25	—
„ լիվանի	20	—
„ մարտինիկօյինը	16	—

ՀԵՌԱԳԻՐ

Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	Ռ.	Կ.
Ռուսաստան	1	
Ավստրիա	2	
Անգլիա	3	
Գերմանիա	4	
Ֆրանսիա	2	88
	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐԶԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Ա. Մ. Նօվ։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Րիօն	6. 47	
Փօթի	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից	9. 13	
Րիօն	12. 13	
Միխայլօվօ.	5. 39	1 37
Գօրի.	7. 5	[illegible]
Թիֆլիս	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի.	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Րիօն.	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը։

Երկուշաբթի. վէրմիշէվ և Գօրալևիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւնների ձեռագիտական մասը 10-ից մինչև 11 ժամ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ վեներական և կաշու հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէտնով աչքի հ.,

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Բակստ կրծքային և ջղային հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, Կ. Բախուտով կանանց և ջղային հ.։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ. Պէտնով աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԹԻՖԼԻՍ. Զ. Մ. Ճշմարիտ է մեր ուսուցիչները առաջ խոստանում են և յետոյ հրաժարվում։ Երևի դրանց վրա ազդում են բարեկամները, որոնց համար հեռանալը անտանելի է։

—ՇՈՒՇԻ. Վ. Բ. Վեց րուբլ ստացանք։ Կուղարկենք «Մշակ» յուլիսից մինչև յունվար։ Օգոստոսից մինչև փետրվար չէ կարելի գրվել։ Գրվում են ամեն լրագրին կամ տարով, կամ ինն ամսով, կամ ութ ամսով, կամ վեց ամսով, կամ չորս, երկու և մի ամսով, բայց միայն մինչև տարվայ վերջը և ոչ թէ մի տարվայ օգոստոսից մինչև միւս տարվայ փետրվարը։

—ԱԽԱԼՑԽԱ. Ա. Ս. Ստացանք 20 ր. «Մշակի» բաժանորդագներ. Ցուցակը դեռ չենք կարդացել։

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Ա. Մ. Ա. Ստացանք 15 ր. յօգուտ «Արարատեան ընկ.»։

Дозволено Цензурою 22 Августа 1878 г. Тифлисъ

Типографія Мартиросіанца

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ